

մի դրօշակը մի ղինւորի ձեռքում չէր եւ ոչ էլ մի քանի ղինւորի, այլ մի ամբողջ ժողովրդի. այս պատճառով՝ ոչ գեղան էր ընկնում եւ ոչ թշնամու ձեռքն անդնում:

Աղէտների մէջ հայ ժողովրդի հողին զօրացիւ էր, գրկանքների ու պայքարների մէջ արիացիւ: Այնքան առատութեամբ թափած իր արեւը, զոհարեքած հերոսները, համբերած-տարած տանջանքները ստաւել իտիրական, առաւել թանկ, առաւել անհրաժեշտ էին զարձրել խղճի ազատութիւնը եւ առաւել հաւատ էին ներշնչել յաղթանակը տանելու:

Ժողովուրդը հողու ամբողջ զօրութեամբ գիտակից էր իր վարած կուռն, հաւատում էր իր ընթացքի ճշմարտութեանը: Եւ այս կուռ կարած սերունդից ետալ եկած նոր սերունդը վարում-ներունակում էր ժառանգութիւն ստացած սուրբ պայքարը:

Հայ ժողովրդի յամառ ըմբոստողումը, ժայռ դիմադրութիւնը, մինչեւ վերջին շունչը զուելու անկերեւ վճռականութիւնը, միանալով այլեւայլ զգոհութիւններին ու տեղական կուսակցութիւններին՝ շարժեցին Սասանեան արքունիքի խաղաղութիւնը, առաջ քերին վէճեր ու դաւեր, պայտական յեղափոխութիւններ ու գահընկեցութիւններ մինչև որ հերոս ժամանակների եւ հերոս զարմի ծնունդ վաճան Մամիկոնեան՝ լեւ, անտառ ու քարանձաւ կենդանի գպրոցներից ելած քաջարի ընկերներով նուարակի մէջ 485 թ. փառաւոր դաշնադրութեամբ ձանաչել ունեց Պարսկին հայ ժողովրդի պաշտպանած դատի արդարութիւնը:

Հայ ժողովուրդը ելաւ անտառից ու քարանձախից՝ գիւղ ու քաղաք իշու իր տարած յաղթանակով պսակ բուրբիւռ յաճառ կուռնութեան մարտիրոսացած իր քաջիքի անմահ յիշատակին, եւ իր ընթացքը, իր օրհնակը իբրև յաւիտենական սրբազան կտակ թողնելու յաշոր սերունդներին:

Մ. ա.-ք. ՄՆԵԱՆՆ

24 փետ. 1905 թ. Պարիզ



# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզեան Հայ Եկեղեցու ԵՈՐՋը



Երբ առաջին անգամ լուր տարածուեց Հայերին մէջ թէ՛ Փարիզում մի մեծածախ շքեղ հայկական եկեղեցի է կառուցուում, բոլոր մտածող ազգայինները մէջ կ'ստես թէ բնազդումով, անմիջապէս զարեց այն յոյսը, թէ անուշա եկեղեցուն կեց ծաղի հիմնուի եւ մի մեծ կրթական հաստատութիւն, մի դպրանոց, որը կարողանար բաւարարութիւն տալ մեր ազգի այժմեան դիւստր պահանջները մէկին եւ որը, լրացնելով եկեղեցու կոչումը, նրա հետ միասին կազմէր մի բարոյական եւ մտաւոր հայկական կենտրոն քաղաքակիրթ ազատ երկրում: Հիմի հետաքրքիր լինինք փոքր ինչ հասկանալու այս հնարախալակ ընթացքում: Եւ յոյսի հիմունքը: Ես որ մեր ազգի պատմութեան ընթացքում, քրիստոնէութեան առաջին դարերից սկսած մինչև մեր ժամանակ, հայ եկեղեցին անդգնի կերպով միաւրեւնակ եղի դաստիարակութեան եւ լուսաւորութեան դրօշի հետ, այնպէս որ դաստիարակութիւնը հայ ժողովրդի աչքում եկեղեցու անհրաժեշտ պաշտամունքներից մէկն է համարւած: Այդպէս տեսե՛ք է, ա յբայէս սովորած է մեր ազգը, որ՝ եկեղեցու պարտականութիւնը միայն աստուածապաշտութեան ձէտեր կատարելը չէ, այլ դիւստր օրասպէս ուսում ասրածելը իւր հօտի մէջ: Ուստի մեր ժողովրդի հայեցակէտով, երբ մի եկեղեցի իւր գպրոցը չունի՝ նա դեռ ամբողջացած չէ, նա թէս կ'իՄԱՏ՝ Ուեղի՞ղ է այդ հայ յեցակէտը թէ սխալ — հարցը այդ ժամին չէ այժմ, այլ թէ՛ դա՛ է հայ ժողովուրդի աւանդական հոգեբանութիւնը այդ ինչքում:

Երբորդ, որ մեր հայ ազգութիւնը պատմութիւնից յայտնի է թէ՛ 'օր որ հետաւոր երկրներում Հայր եկեղեցի է կառուցել առանց զպրոցի՝ առանց մտաւոր պարագայ կազմելու եկեղեցու շուրջը, այդպիսի եկեղեցին վերջ ի վերջով թափուր է մնացել եւ ծախուել է օտարներիս, ինչպէս Անտաղղամի եկեղեցին էր եւ այլ նմանները: Ուստի ումն մտածող ազգային բնականաբար պիտի եթմադրէր թէ՛ այդքան անհայտնի փորձերից յետոյ երբ այս հետաւոր վայրում մի համեմատաբար փոքր գաղութի համար այնքան մեծ ծախս է անուում եկեղեցու վրայ, դա լոկ յառաջութիւն չէ, այլ սկիզբն է երկանց, որին պիտի հետեւին եկեղեցու հոյակապութեան համեմատ՝ դպրանոց իւր ուսուցչա-

կան խմբով եւ այլն, որոնցով միայն պիտի յարատեւութիւն ստանայ գործը եւ մեծագործութիւն դառնայ, ինչպէս այդ տեսնում ենք մեր կաթողիկ եղբայրների փորձից Սուրբ-Լազարի եւ Վիեննայի եկեղեցական-դպրոցական հաստատութիւններով :

Վերջապէս երրորդ, մինչեւ օրս Հայի դրամով հաստատուած դպրոցներից միայն նրանց կրում են իրենց վրայ ազգային կրօնը, մ. յայնչն հայ լեզուով եւ հայ հոգով կրօնը, եւ սաներին, որոնք եկեղեցու նստ սերտ կապուած են եղել . իսկ որոնք որ եկեղեցուց բաժան են հիմնել, նրանք կամ ոչնչացել են կարճ ժամանակում կամ օտարացել են իրենց դատողութիւններից հակահայրէջք է թէ՛ ինչո՞ւ Փարիզում հոյակապ ազգային եկեղեցի կառուցելու լուրը այնպէ՛ք արագ եւ թունգ խիղի տուց մեր ազգի սիրտը : Վասն զի Հայի հոգին բնագրումով վկայում էր՝ թէ՛ եկեղեցուն կպած պիտի ընկեր նսեւ մի առանձնորդական եւ քանոնային ընկալարան (ինչպէս արդէն շինուած պատրաստ է), թէ՛ եկեղեցուն մօտ պիտի հիմնուի մի գրգռանդ (քայլէ՛մ), որը համապատասխանը ազգային այժմեան պէտքերն եւ միեւնոյն ժամանակ փոխադարձաբար նպաստէր եկեղեցու յարատեւ եւ վաշխուէ՛ գործնութեան (որովհետեւ, ըստ իս, միմիայն դպրանոցի աշակերտներով կարող է ապահովուիլ եկեղեցու կանոնաւոր եւ ներգլխակ երեքեցութիւնը, նսեւ եկեղեցու դպրական պայտօնակաւարութիւնը որոշեալ օրերուով) — Արդ՝ երեւակայնցէ՛ք Փարիզի պէս լուսաւոր, հարգաւոր կրթական միջոցներով ի տեղում՝ Հայկական եկեղեցի, Առաջնորդ եւ քանոնայ իւրեանց եկեղեցական խորհրդով աշխարհականները, Հայ Դպրանոց իւր հոգաբարձութիւնով եւ մանկավարժ ուսուցիչների եւ ուսուցչապետների խմբով, որ կ'ուսնանայ ապագայում անուշտ իր տպարանը, իր մանկավարժական թերթը, թնայեալանը եւն. — այս բոլորը Ամմասյն Հայոց Կաթողիկոսի իրաւասութեան եւ Պոյոյն Սրբազան Պատրիարքի հսկողութեան ներքոյ, — անա՛ ձեզ այն բարոյա-մտաւոր հայ կենտրոնը, որ անուշտ պիտի վայելէ համայն ազգի վտանգութիւնը եւ ձեռնառութիւնը : Այսպիսի կենտրոնը բնագրական ազգային ինքնապաշտպանութեան մի միջոց է, որ մեզ պէս հալածուած ազգեր, օրինակ՝ Հրեաները, Ուրլանացիք, Լեհացիք, տարիներից ի վեր ստեղծել են Փարիզում եւ այստեղից իրանց ազգերի խաղաղ վերածնութիւնը քայլ առ քայլ իրականացնում են առանց արգելքի :

Այսպիսի գործը լուսաւորութեան մեծ կենտրոններում միայն կարող է կանոնաւոր, ըստ մեր ժողովրդական առածին թէ՛ « ձուկը ծովի մէջ կը մննայ » . փոքր քաղաքակրթական քունները, ինչպէս Լոզանի է, Երփատոսն է, ընդհանուր բարոյական ազդեցութիւն գործել ազգային կանգի վրայ մի դպրոցական հաստատութիւնով — անհնարին է : եւ անհետա-

տեսութիւն կը լինի այսպիսի նորաշէն եկեղեցին հոգեկարգի մէջ թողած գնայ ուրիշ անկուններում դպրոց հաստատել . . . : Եթէ Փարիզի դէմ խօսողներ կան, շեշտելով նրա փոքրոջային կեանքի զեղխութեան օրինակները, պոքր այժմեան ձգտումներից դպրոցների աշխարհականացման (laicisation) եւ այլն, այդպիսիներին լաւ պատասխան կարող են լինել Վիեննայի պէս եւ Վիեննայի պէս մեծ քաղաքներում իւրեանց գոյութիւնը որոշ ուղղութեան երկրորդ տարիները շարունակող Սխիթարեան միաբանութեանց դպրոցական հաստատութիւնները, նոյն իսկ Փարիզում վաղուց հիմնուած հրեական գիշերօթիկ դպրոցային հոգեւոր Սէմինարի եւ Տալմուս-Թօրան (միջնակարգ դպրոցը 14 տ. հասակից), Հրէից ընդհանուր Այլանախ վարժապետանոցը, որ շատ օրինակելի կողմեր ունին :

Վերջ բերածս կէտերով կարծեմ թէ՛ բաւական պարզեցի մեր հայ ազգայինների հիատակ վերաբերման պատճառը ժան-Պուստի փողոցի հայ եկեղեցու կառուցման լուրերին եւ փոքր ի շատէ մեկնեց այդ եկեղեցու սկզբնաւորութիւնից բոլորն յոյսերի հոգեբանութիւնը :

Շատերին յայտնի է որ այդ ազգային յոյսերը գնահատուցելու երկու-երեք տարի առաջ նոյն իսկ օտարներից Փարիզի մտաւոր աշխարհի բարձր անձնաւորութիւններ, որոնց անունները թուրքեր երկրորդ կը լինէր այժմ մեր որոնք յայտնի են Յրատիպաւում իրքեւ ամանա-յարգելի ներկայացուցիչներ բարձրագոյն գիտութեան, մասնագիտութեան, հրապարակախօսութեան եւ երկրի կառավարութեան, Առաջադեպականութեան, եւ որոնք կամեցան նոյն այդ յոյսերի թխաբժան հանդիսանալ, մասնաւոր ի նկատի առած խղճուէ՛ Տանկանայրի կրթական սուղ միջոցները, դիմեցին Փարիզեան եկեղեցու հիմնադիր հայ բարեբարին համարական առաջարկով՝ հիմնել եկեղեցու նստ միասին մի կօլլէ՛մ (պարանոց), որի համար նրանք խոստանում էին ամեն տեսակ արակցութիւն : Որքան յայտնի է, հայ բարեբարը իր կողմից այն միջոցին դրական պատասխան տուած է այդ առաջարկին, յետազօղով դրա իրականացումը եւ հոգը եկեղեցու յիմնութեան ակարատմից հետոյ : Արդ՝ եկեղեցին, փա՛ռք բարեբարին, շինուած պատրաստ է եւ ժամանակագրութիւնը կատարուած է նրա մէջ : Ժամանակն է ուրեմն մտածել այժմ դպրանոցի մասին :

Այ՛, պէտք է մտածել եւ հոգալ առանց այս եւ այն կողմ տատանելու, թէ ինչ տիպարի կրթական հաստատութիւն պիտի հիմնուի Փարիզում, ինչ ծրագիր նա պիտի ունենայ, ո՞րքան միանուող ծախս կը հարկաւորի, ո՞րքան տարեկան ծախս՝ հաստատութիւնը անպափան պահպանելու համար : Այդ հազադողութիւնը նախ պէտք է սպասուի Փարիզի եկեղեցայն բարեբարից, եթէ նա կամենում է սկսած գործը լրացնել եւ հայ ժողովրդի վերը յիշածս յոյ-

սերը աւելի մեծ գործով պսակել, անմահացնելով իբր անուշեր ոչ պակաս քան Լազարեանները, Սանասարեանը եւս, Նոյնը պէտք է ըստատու բարեբաղի ձեռնարկ եւ կրթական գործին հմուտ բարեկամներին, որոնք մշակեն նրա համար այդ կարեւոր գործնական հարցերը, էթէ այս ամենը որ եւ է անպատելի պատճառով չ'այդոյի, չէ՞ որ ազգը կամ ազգի կարողութիւն ինքը կարող է հաւաքական այժմով ստեղծել Փարիզի հայ եկեղեցու շուրջը այն մտաւոր կենտրոնը, որ ա՛յնքան մեծ նշանակութիւն կ'ունենայ իր համար ապագային :

Կերը բերածս խորհրդածութիւններով եւ կամեցայ միայն ընդհանուր կերպով ուրուագծել այն, ինչ որ մանրամասնորէն յիշելի հարցերի նկատմամբ պէտք է մշակուի ձեռնհաս անձերի յատուկ մասնախմբով : Եթէ բանը հայ հասարակութեան միայն, անուշտ պէտք է իւր ժամանակին ծանօթացնել նրան « Անահիտ » ի միջոցով կազմուելիք ծրագրի գլխաւոր եզրակացութիւններին :

10 Մարտ 1905 Փարիզ ԳԻԻՄՐԵՑԻ



## Արեւելեան Գրականութիւն

### ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԱՍԵՆՈՒԹԻՒՆ

Այսպեսով որ թրքերէն լեզուի ծանօթ հայ գրագէտներ օսմանեան գրականութիւնը իր բոլոր երեսներով հայ հասարակութեան ծանօթացնեն, կ'ուզեմ օգտուել շահեկան հատոր մը (1) զոր այս օրերս նրատարակեցին Պ. Ապտիւլ-Հալիմ Մէմուռն եւ Էմման Ֆազի, զազգիսբ մը տալու համար մեր հասարակութեան ոչ-թրքագէտ մասին այդ գրականութեան մէջ ճիշդուի, սիրային քննադրութեան վրայ : « Թրքական սիրոյ ժողովապաշտ »-ը երկրորդ թիւն է շարքի մը, որուն առաջինն էր՝ Արաքալեան սիրոյ ծաղիկախաղը, ֆրանսերէնի թարգմանուած Պ. Չեչուրեան տը Մարթինօի եւ Ապտէլ իսայիք պէյն ձեռքով, եւ որ երեսցաւ քանի մը արիւր առաջ :

Ապտիւլ-Հալիմ Մէմուռն Ալէյ, « ճշմարտագէտ » ազատամիտ Թուրք մին է, Թուրք մը որուն նմանները բազմից էր որ նուազ սակաւագիտ ըլլային : Կից եօթն իրիս տասը Համբոտ յաղորդութեան հարցին իր նուիրած յօդուածը Եօրնիկեան մէջ՝ մտածմանց լայն եւ ազնիւ անկախութեան մը կը յայտնուի, այդ նոյն սգին կը փայլի այն հատորին մէջ ալ : Կէմալ պէյն առթիւ՝ խօսելով Թուրք ազատական կու-

սակցութեան մասին, Ապտիւլ-Հալիմ Մէմուռն հետեւեալ անկեղծ եւ արի սողերով կը յայտնէ իր ցարժ այդ կուսակցութեան այժմեան անկեալ կայրութեան նկատմամբ . « Պէտք չէ չլուծել այն ատմութեան (Իէմալ պէյն ատենութեան) ճշմարիտ Երիտասարդ-Թուրքիան այսօրուան կարծեցեալ Երիտասարդ-Թուրքիային հետ : Եզրպատական գահէն զրկուած՝ իր եղբորը Իսմայիլ փաշային, Սուլթան Ապտիւլ-Ազիզին եւ Մեծ Եպարզուս Այի փաշային ձեռքով, Մուսթաֆա ձագըլի փաշայ հիմնեց առաջին . . . եւ վերջին թրքական ընկերութիւնը քաղաքական եւ ընկերական զարթման : Իսկոյն Սուլթանը ըստանեց գործուած սխալը, եւ առջարկեց զարձնել իրեն թագը որ իրմէ պողոտած էր . բայց զայնպիսի վերանորոգիչը մերժեց : Նախընտրեց գոնէ իր թագը, եւ իր սողը թուրք ժողովուրդը թագազակել, անոր չնորոգիչով օրինական վեհապետութիւնը Մուսթաֆա Յամզիլ փաշայի Երիտասարդ-Թուրքիային չնորոգէ է որ Սամանգիբ ունեցան Միտահթ փաշայի Սահմանադրութիւնը, որ, աւա՛ղ վաղաճողուկ եղաւ Այդ ըրմանին գլխաւոր թուրք տաղանդները, այն մարգիկը որոնց անդրչիրիքման ազդեցութիւնը դեռ լոյսի նշողին մը կը ձգէ համարական Թուրքիային վրայ, Մուսթաֆա Յամզիլի խորհրդականները, քարտուղարները, բարեկամներն էին Այն անհասները որ այժմ ինքզինքնին Երիտասարդ-Թուրք կ'անուանեն օտար երկիրներու մէջ, երեք տեսակի կը բաժնուին . ոմանը, ամենէն բազմաթիւները, միանգամայն շաշուտ եւ խաչազող, իրենց բարենորոգչական եռանդը կը սահմանափակեն իրենց լրտեսական գործունէութեան ձգած պարագայ ժամերուն մէջ՝ տարաւոր պարտաւարքեր հրատարակելու, որոնք սահմանուած են իրենց զրգային դրած հայրայնելու կամ չանաբեր պայտօններ՝ երբ Արեւելքը դառնան . այլք պարագայէս գծողները են, զո՞նք համարական վարչութեան, որ կծիկը դրած են՝ անարդարութենէ մը խալըսելու համար, եւ այլ եւս Գաթիբի կաթիլի սրճարաններուն մէջ կը ստը կան՝ մոռնալով իրենց շահերը, իրենց ընտանիքը, իրենց հայրենիքը . ուրիշներ վերջապէս, ազգի Սուլթանին օրով յայտնութեան հասած ըլլալով, կը մանաւ մղաւուան Սուլթանին բարեկամութիւնն այժմէն վատթրելի : կէս-ձայնով, ինքճերտին հանդարտացնելու համար՝ Սահմանադրութեան վերահաստատումը պահանջելով հանդերձ, կը փառաբանեն գահաժառանգը որուն նկարագրին ու դիտաւորութիւնները ոչ որ գիտէ սակայն : Անոնցմէ ոչ մէկը Թուրքերը կը հրաւիրէ ընկերական յտազդիմութեան, ուշիմ եւ աճեական գործունէութեան, եւ իրենց լրագրիները երոպական ընթերցողին ո եւ է ստեղծութիւնն չեն տար Թուրքերուն մէջ գոյնուած շահեկան ու գեղեցիկ բաներուն մասին : Երբեմն Երիտասարդ-Թուրքերուն ճշմարիտ զաւակներն անոնք են որ, հոն, իրենց երկրին մէջ, լուծեայն կը պատրաստեն լաւագոյն ապագայ մը : Շատ հազ-

(1) Anthologie de l'amour turc, par Abdul-Halim Memdouch et Edmond Fazy. Librairie du Mercure de France. Գին 3 Ֆր. 50